Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
մարտի 27-ի N 348-Ն որոշման

Ձև

ԱՆՁԻ ԿԱՄ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՋՄԱԿԵՐՊՉԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԻՁՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

1. Կազմակերպչի տվյալները՝

1) անվանումը.

2) պետական գրանցման համարը.

3) ՀՎՀՀ-ն.

4) լիցենզիայի համարը.

5) գտնվելու վայրը.

6) գործունեության իրականացման վայրը.

7) կապի միջոցները՝

ա. հեռախոսահամարը,

բ. էլեկտրոնային փոստը:

2. Մասնակցության ավելացման ձևը՝

1) կազմակերպչի՝ այլ մասնակցից (մասնակիցներից) բաժնեմասի ձեռքբերում՝

ա. բաժնեմաս ձեռք բերող մասնակից (անունը, ազգանունը և անձնագրի տվյալները կամ անվանումը և պետական գրանցման համարը),

բ. օտարող մասնակից (անունը, ազգանունը և անձնագրի տվյալները կամ անվանումը և պետական գրանցման համարը).

2) բաժնեմասի ավելացում կազմակերպչի կանոնադրական կապիտալում՝ նոր ներդրման արդյունքում՝ ներդրող մասնակից (անունը, ազգանունը և անձ-նագրի տվյալները կամ անվանումը և պետական գրանցման համարը).

3) մասնակցի բաժնեմասի ավելացում այլ մասնակիցների բաժնեմասերի՝ ընկերության կողմից հետգնման արդյունքում՝

ա. հետգնման արդյունքում նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակից (անունը, ազգանունը և անձնագրի տվյալները կամ անվանումը և պետական գրանցման համարը),

բ. բաժնեմասն ընկերությանը վաճառող մասնակից (մասնակիցներ) (անունը, ազգանունը և անձնագրի տվյալները կամ անվանումը և պետական գրանցման համարը).

4) այլ (մասնավորեցնել)։

3. Ներդրման ծագման աղբյուրների մասին տեղեկություններ և հիմնավորումներ՝

---

4. Նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակցի իրական շահառուներ՝

1) իրական շահառուները համընկնում են մասնակցի հետ (այլ շահառուներ չկան).

2) իրական շահառուներ առկա են (տեղեկություններ վերջիններիս մասին)՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները կամ անվանումը և գրանցման համարը։

5. Սույն միջնորդությունը ստորագրելով և լիազոր մարմին ներկայացնելով՝ հայտարարում և հավաստում եմ, որ նշանակալից մասնակցություն ձեռք բերող բաժնետերը, փայատերը կամ մասնակիցը կամ նրանց իրական շահառուները, կամ նրանց հետ փոխկապակցված անձինք՝

1) չի հանդիսանում այնպիսի ֆիզիկական անձ, որը՝

ա. դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի դատվածություն, և դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

բ. օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,

գ. սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ,

դ. հանդիսացել է խաղային գործունեության այն կազմակերպչի՝ նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետեր, փայատեր կամ մասնակից կամ նրա իրական շահառու, որի խաղային գործունեության կազմակերպման լիցենզիայի գործողությունը վերջին երեք տարվա ընթացքում դադարեցվել է որպես պատասխանատվության միջոց,

ե. չի ներկայացնում իր կողմից ներդրվող դրամական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն),

զ. հանդիսացել է խաղային գործունեության այն կազմակերպչի՝ նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետեր, փայատեր կամ մասնակից կամ նրա իրական շահառու, որի խաղային գործունեության կազմակերպման լիցենզիայի գործողությունը վերջին երեք տարվա ընթացքում դադարեցվել է որպես պատասխանատվության միջոց.

2) չի հանդիսանում այնպիսի իրավաբանական անձ՝

ա. որի կանոնադրական կապիտալում 10 և ավելի տոկոս մասնակցություն ունեցող բաժնետերը, փայատերը կամ մասնակիցը կամ գործադիր մարմնի ղեկավարը չի համապատասխանում «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջներին,

բ. որը գտնվում է սնանկացման վարույթում,

գ. որի խաղային գործունեության կազմակերպման լիցենզիայի գործողությունը վերջին երեք տարվա ընթացքում դադարեցվել է որպես պատասխանատվության միջոց,

դ. որը չի ներկայացնում իր կողմից ներդրվող դրամական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

6. Միջնորդությանը կից ներկայացվում են միջնորդությունում նշված բոլոր ֆիզիկական անձանց՝ անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև արտասահմանում գրանցված իրավաբանական անձանց գրանցումը հավաստող՝ պատշաճ կերպով վավերացված փաստաթղթերը, ներդրվող դրամական միջոցների ծագման աղբյուրների օրինականությունը հիմնավորող փաստաթղթերը՝

Միջնորդությունը լրացնելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը

Միջնորդություն ներկայացնող _____

(ստորագրությունը)

(անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի տվյալները):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ